

## Կարծիք

Արմինե Հրաչիկի Ասլանյանի «Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների հոգեհուզական հիմնահարցերի և առողջական վիճակի հիգիենիկ բնութագիրը» թեմայով ԺԴ 00.05 «Հիգիենա, մասնագիտական ախտաբանություն և թունաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածու գիտական աստիճան հայցման համար

Երեխաների, ինչպես վաղ մանկական տարիքն, այնպես էլ ուսումնառության տարիներն, ունեն կարևոր նշանակություն մարդու առողջության ձևավորման համար: Այդ տարիների ընթացքում միջավայրի անբարենպաստ պայմանները հետագայում բերում են օրգանիզմում մի շարք շեղումների և հիվանդությունների: Դպրոցական տարիներն իրենց նյարդահոգեբանական, հուզական և ֆիզիկական լարվածությամբ կարող են հանդիսանալ լուրջ ռիսկի աղբյուր դեռ լրիվ չձևավորված դեռահասի օրգանիզմի համար:

Արագ փոփոխվող աշխարհում նաև կտրուկ փոխվում է դպրոցը՝ աճում է աշակերտին հասցվող տեղեկատվության ծավալն ու բարդությունը: Աշխատաշուկայի աճող պահանջներից ելնելով՝ շարունակաբար փոփոխվում են հանրակրթական ուսումնական ծրագրերը, շատ հաճախ հաշվի չառնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները: Փոփոխությունները ոչ միայն ծրագրային են այլ նաև համակարգային՝ ուսուցումը վեց տարեկանից, տարրական, հիմնական և ավագ դպրոցների տարանջատում: Այս ամենը մի շարք հետևանքներ կարող է թողնել դեռահասների վրա, քանի որ նրանք գտվում են օնտոգենեզի ակտիվ շրջանում և առավել խոցելի են տարբեր գործոնների ազդեցության նկատմամբ՝ շրջակա միջավայր, սոցիալ-հիգիենիկ պայմաններ, միջանձնական փոխհարաբերություններ և այլն: Այս գործոնները կարող է տարբեր դրսևորումների պատճառ դառնալ՝ էմոցիոնալ գերլարվածություն, վարքագծային փոփոխություններ, սոցիալական շերտավորում, ի վերջո հանգեցնելով լուրջ առողջական խնդիրների առաջացման:

Նշված հարցերը խիստ արդիական են մեր հանրապետության համար՝ հաշվի առնելով դպրոցական կրթության համակարգում իրականացված բարեփոխումները: «Հանրակրթության պետական կրթակարգում» սահմանված է, որ ավագ դպրոցը վերջին օղակն է, որը պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի ու աշխատանքի շուկա մտնելուն: Մակայն դպրոցի ոչ պակաս կարևորություն ունեցող առաքելություններից է դեռահասների առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

ԵՊԲՀ հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնը երկար տարիներ ձեռնամուխ է եղել մի չափազանց կարևոր գործի՝ աշակերտների առողջության վրա դրպոցական ուսուցման տարբեր մոդելների ազդեցության գնահատմանը: Մինչ այժմ ուսումնասիրվել էր ինտենսիվ ուսուցումը, տարրական դպրոցը, վեցամյա կրթությունը: Այս առումով քննարկվող աշխատանքը հանդիսանում է ամբիոնի փորձի տրամաբանական շարունակությունը և լրացնում է բացը կապված դեռահասների՝ ավագ դպրոցի աշակերտների հետ:

Դրանով իսկ պայմանավորված է Արմինե Ասլանյանի «Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների հոգեհուզական հիմնահարցերի և առողջական վիճակի հիգիենիկ բնութագիրը»

թեմայով կատարված աշխատանքի արդիականությունը և կարևորությունը մեր հանրապետության համար, որը նվիրված է հենց վերոհիշյալ հարցերի ուսումնասիրմանը: Այդ հարցերը նաև սերտորեն առնչվում են ազգային անվտանգության հետ՝ աճող սերնդի առողջության ապահովում ի նպաստ ազգի և բնակչության առողջության ամրապնդմանը:

Ատենախոսությունը շարադրված է 197 էջի վրա, որից 40 էջը՝ հավելված, ունի դասական կառուցվածք և կազմված է 5 գլխից (երեքը՝ սեփական հետազոտության արդյունքներ), ներածությունից, ամփոփումից, եզրակացությունից, գործնական առաջարկություններից, պարունակում է 12 աղյուսակ և 12 գծապատկեր: Գրականության ցանկը պարունակում է 264 սկզբնաղբյուր, որոնցից 247 օտար լեզվով: Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդական հիմքը, օբյեկտի ընտրությունը, նորույթը, ներկայացված է գիտագործնական նշանակությունը: Քսաներկու հավելվածում ներկայացված են օգտագործված գործիքները (հարցաթերթերը) և որոշ լրացուցիչ աղյուսակներ:

Մեթոդաբանության բաժնում հիմնավորված են հետազոտության կառուցվածքը, հետազոտության կազմակերպման մեթոդները, ընտրանքի ծավալը: Հիմնականում կիրառվել են հայտնի միջազգային վավերականացված հարցաթերթեր, ինչպես նաև սեփական մշակված գործիքներ: Հասուկ կուզենայի նշել, որ աշակերտների առողջության գնահատականը տրվել է 11 նեղ մասնագետի բժշկական քննության արդյունքում:

Համաձայն դրված նպատակին հեղինակի կողմից մանրակրկիտ ուսումնասիրվել են կենսասոցիալական գործոնների հնարավոր ազդեցությունը, դեռահասների հոգեկան վիճակը և հարմարման առանձնահատկությունները, ֆիզիկական զարգացման հնարավոր փոփոխությունները, առողջական վիճակը դպրոցական նոր միջավայրի փոքր ինտենսիվությամբ ազդող գործոնների պայմաններում:

Ստացված արդյունքները թույլ են տվել արձանագրել, որ հոգնածության պատճառով ավարտական դասարանում նվազում է աշխատունակությունը, առաջադիմությունը: Ուսումնառության ընթացքում դեռահասների մոտ փոխվում է նաև սննդակարգը, ֆիզիկական ակտիվությունը՝ վատթարանալու միտումով: Դրա հետ կապված փոխվում է ավագ դպրոցականների գնահատականը իրենց առողջության վերաբերյալ՝ ավարտական դասարաններում սպորտով կանոնավոր զբաղվող աշակերտների միայն 26,5% և չզբաղվողների 2% են գերազանց գնահատել իրենց առողջությունը, ինչը նշանակալիորեն ցածր է ուսումնառության սկզբի համապատասխան ցուցանիշներից: Երեխայի առողջության համար կարևոր է նաև քնի բավարար տևողությունը: Ըստ ստացված արդյունքների ուսումնառության ավարտին գրեթե կրկնակի ավելանում է բավարար չափով չքնող դեռահասների թիվը, ինչը բացասաբար է ազդում երեխաների մտավոր կարողությունների վրա: Հարցումների արդյունքները ցույց են տրել, որ անբավարար քնի պայմաններում ավարտական դասարանների սաները ավելի հաճախ են գանգատվում հիշողության (11,9%), կենտրոնացման (21,4%) վատացումից՝ ի տարբերություն 10-րդ դասարանցիներից:

Ավագ դպրոցում սովորողների ֆիզիկական զարգացման ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ այդ ցուցանիշները հիմնականում ունեն միջին արժեքներ: Իսկ ցուցանիշների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ քաշի միջինից ցածր

արժեքներ ավելի հաճախ գրանցվել են աղջիկների, իսկ բարձր տղաների մոտ: ՄՁՑ-ի գնահատման արդյունքները վկայում են, որ դեռահասների դիտարկված բոլոր խմբերում այն գտվում է նորմայի սահմաններում: Սակայն մտահոգիչ է այն փաստը, որ տարիքի մեծացմանը զուգընթաց ավելանում է անբավարար քաշ ունեցողների թիվը: 15 տարեկան պատանիներից յուրաքանչյուր 5-րդն ունեցել է ավելցուկային քաշ, ինչն արժանի է առանձնակի ուշադրության:

Հեղինակի կողմից գնահատվել է դեռահասների առողջական վիճակը դինամիկայում՝ ուսումնառության սկզբին ու ավարտին, բժշկական քննությունների միջոցով: Ըստ ստացված արդյունքների՝ ավագ դպրոցում ուսանելու ընթացքում դեռահասների շրջանում հատկապես բարձրանում է քրոնիկ հիվանդությունների տարածվածությունը: Առաջին 3 կարգային տեղերը զբաղեցնում են XIII դասի՝ ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի, VII-րդ՝ աչքի և նրա հավելյալ ապարատի, X դաս՝ շնչառական օրգանների հիվանդությունները: Միաժամանակ, ուսումնառության ընթացքում աճել են նյարդային և մարսողական համակարգերի հետ կապված խանգարումները: Ստացված պատկերը որոշ չափով կարելի կապել սեփական առողջությանը տրվող գնահատականի հետ: Այսպես, 10-րդ դասարանում սեփական առողջությունից բավարարված չեն եղել դեռահասների 10,3%-ը, մինչդեռ 12-րդ դասարանում՝ 25,5%-ը, ինչը ավելի քան կրկնակի բարձր է: Բացի դրանից, առավել տազնապալի է այն փաստը, որ ավագ դպրոցն ավարտելիս նշանակալի պակասում է (գրեթե կրկնակի) առողջական I և ավելանում է III-րդ խումբ ունեցող երեխաների թիվը:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ դեռահասները բավականին լավ են հարմարվում ուսումնակրթական և սոցիալական նոր միջավայրին՝ դրսևորելով հիմնականում բարձր մակարդակի հարմարվածություն: Սակայն, դեռահասների որոշ մասը (25%) ունի բարձր տազնապայնություն, ինչը խոսում է կոնֆլիկտայնության, նյարդային լարվածության մասին: Դեռահասների շրջանում կան նաև ցածր տազնապայնություն ունեցողները, որոնք առանձնանում են խիստ արտահայտված հանգստությամբ, հուզական մեծ զսպվածությամբ: Նման հանգամանքների պայմաններում, ուսուցիչների, հոգեբանների, բժշկների կողմից անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված, անհատական մոտեցում՝ ելնելով դեռահասների հոգեհուզական, և խառնվածքի առանձնահատկություններից:

Իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա իրականացվել է ավագ դպրոցականների առողջական և հոգեհուզական վիճակի համալիր վերլուծություն և տրվել նրանց հարմարողական, հոգեհուզական ու առողջական հիմնահարցերի հիգիենիկ գնահատականը, դրանց միջև գոյություն ունեցող կորելիացիոն կապերի առկայությունը:

Բացահայտվել է առողջ ապրելակերպի թե՛ իմացական, և թե՛ կիրառական անբավարար մակարդակ, ուսումնառության ընթացքում հիվանդության ցուցանիշների աճ, առողջական վիճակի վատթարացում, նյարդային համակարգի, մարսողական օրգանների հիվանդությունների, հոգեհուզական վիճակի և հարմարման գործընթացի միջև կորելիացիոն կապի առկայություն:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է նշել, որ Արմինե Ասլանյանի կողմից կատարվել է ծավալուն, մանրակրկիտ աշխատանք, իրականացվել է ստացված արդյունքների բազմակողմանի, համալիր վերլուծություն: Ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ, ունի մեծ գործնական նշանակություն, մշակվել և տրվել են առաջարկություններ՝

ուղղված դեռահասների վրա գործող կրթական համակարգի անբարենպաստ ազդեցության մեղմացմանը, ինչը կարևոր նշանակություն ունի ապագա սերնդի առողջության պահպանման ու ամրապնդման հարցում:

Նյութերի շարադրման կառուցվածքը լիովին համապատասխանում է աշխատանքի նպատակներին ու առաջադրված խնդիրներին: Ատենախոսության արդյունքները հրատարակվել են պահանջված թվով աշխատանքներում, այդ թվում ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրում: Հետազոտությունները կատարվել են գիտամեթոդական բարձր մակարդակի վրա: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ավարտուն գիտական մշակում, ինչը բնութագրում է հեղինակին՝ Արմինե Ասլանյանին, որպես հասուն, կայացած գիտաշխատող, ով տիրապետում է ժամանակակից մեթոդներին, կարող է ստացված արդյունքների, հավաքագրված նյութերի վերլուծությամբ առաջադրել և լուծել դրված գիտական խնդիրները:

Ատենախոսության սեղմագիրն իր բովանդակությամբ ամբողջովին արտահայտում է աշխատանքի էությունը:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ներկայացված աշխատանքը, այնուհանդերձ կան որոշ հարցեր և առաջարկություններ.

1. Փաստացի տվյալները հիմնականում բերված են ոչ թե աղյուսակներում, այլ տեքստի մեջ ինչը դժվարեցնում է նյութի ընկալումը, երբ պետք է գնահատել երկու խմբերի արժեքներ: Բացի այդ ներկայացված են միայն միջին մեծություններ առանց միջին սխալի կամ ստանդարտ շեղման: Ներկայացվում է միայն հավանականության ( $p < 0,05$ ) արժեքը, մինչդեռ գերադասելի կլիներ պարզաբանելու, թե ինչպես է այն գնահատվել,  $t$ -թեստի, թե համապատասխանության գործակցի միջոցով:

2. Լրացուցիչ պարզաբանման կարիք ունի քնի տևողության, առաջադիմության և դասերի պատրաստման տևողության միջև կապի մեկնաբանությունը (էջ 62):

3. Մի շարք 2x3 աղյուսակների գնահատման համար կիրառվել է համապատասխանության գործակիցը, որի հիման վրա եզրակացություն է արվել փոփոխությունների հավաստիության վերաբերյալ կոնկրետ խմբերի միջև: Մինչդեռ ավելի ճիշտ կլիներ ավարտել թեստը զույգ առ զույգ գնահատականով (*post hoc*):

4. Հեղինակն ուսումնասիրել է մի շարք գործոնների հնարավոր ազդեցությունը դաշտանային ցիկլի խանգարումների հետ՝ կիրառելով կորելյացիոն վերլուծություն ըստ Պիրսոնի, որը պարզաբանման կարիք ունի:

5. Հեղինակը կատարել է շատ արժեքավոր առողջության կրկնակի գնահատում՝ սուբյեկտիվ, հարցաթերթիկային և օբյեկտիվ բժշակական գնում: Հետաքրքիր կլիներ վերլուծել տվյալների համընկնումը, ինչը հնարավորություն կտար գնահատել ընդհանրապես հարցաթերթիկային հարցման պիտանելիությունը նմանատիպ հետազոտությունների ժամանակ:

6. Եզրակացությունների 7-րդ կետի (բացահայտվել է կորելյացիոն կապ...), հիմնավորումը նյութերում արտացոլված չէ, ինչը պահանջում է պարզաբանումներ:

Նշված թերությունները և առաջարկությունները այնուամենայնիվ չեն նսեմացնում աշխատանքի արժեքը և բարձր ընդհանուր գնահատականը:

Այսպիսով, Արմինե Հրաչիկի Ասլանյանի «Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների հոգեհուգական հիմնահարցերի և առողջական վիճակի հիգիենիկ բնութագիրը» թեմայով կատարված ատենախոսության արդիականությունը, աշխատանքների ծավալը, նորույթը և գիտագործնական նշանակությունը թույլ է տալիս ամփոփել, որ այն լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին (կետ 7), իսկ հեղինակն արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանին:

ԵՊԲՀ Հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր

Ա. Է. Թաղևոսյան

Ա. Է. Թաղևոսյանի ստորագրությունը հաստատում եմ,

ԵՊԲՀ գիտական քարտուսարի,  
բ.գ.դ., պրոֆեսոր

Տ. Գ. Ավագյան

26.03.2021թ.

